

ԹԱԳՈՒՀԻ ՂԱԶԱՐՅԱՆ

ԵՐԿՈՒ ՎԵՊ, ԱՎԱՆԴՈՒՅԹԻ ՀԱՂԹԱՀԱՐՄԱՆ ԵՐԿՈՒ ՓՈՐՁ
(ԽԱԶԱՏՈՒՐ ԱԲՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ» ԵՎ ԵՂԻՇԵ ՉԱՐԵՆՑԻ
«ԵՐԿԻՐ ՆԱԻՐԻ» ՎԵՊԵՐԸ)

DOI: 10.24234/journalforarmenianstudies.v2i69.171

ԱՄՓՈՓՈՒՄ

Հոդվածում դիտարկվում է Աբովյանի «Վերք Հայաստանի» և Չարենցի «Երկիր Նաիրի» վեպերի ավանդույթահաղթահարման մեխանիզմները: Ցույց է տրվում, որ այս ստեղծագործությունները ներկայացնում են գրական նորարարության երկու տարբեր մոդել՝ յուրաքանչյուրն իր ժամանակի գրական ճգնաժամի յուրահատուկ պատասխան: Հետազոտությունը կիրառում է Ֆրանկո Մորետտիի փոխզիջման տեսությունը, Էդվարդ Սաիդի օրիենտալիզմի քննադատությունը և Բախտինի ժանրային մոտեցումները: Աբովյանի մոդելը բնութագրվում է որպես արմատական փոփոխության ռազմավարություն, որտեղ հին տարրերը (գրաբար, սրբերի վերաբերյալ բովանդակություն) լիովին փոխարինվում են նորերով (բարբառ, սիրային-ազգային նյութ): Չարենցի մոդելը ներկայացվում է որպես «քննադատական» մեթոդ, որտեղ ավանդական ձևերը պահպանվելով՝ ենթարկվում են երգիծանքի և վերաիմաստավորման: Հոդվածը բացահայտում է ավանդույթի հաղթահարման ցիկլային բնույթը՝ ցույց տալով, որ Աբովյանի հեղափոխական նվաճումները դառնում են Չարենցի քննադատության օբյեկտ: Եզրակացությունն այն է, որ երկու վեպերի նմանությունը ոչ թե բովանդակային է, այլ մեթոդաբանական:

Բանալի բառեր և արտահայտություններ. վեպ, ավանդույթի հաղթահարում, օրիենտալիզմ, Աբովյան, Չարենց, ժանրի նորարարություն,

արևմտյան ֆորմա, փոխզիջում, գրական հեղափոխություն, մեթոդաբանական նույնականություն:

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ավանդաբար հայ գրականագիտությունը Աբովյանի «Վերք Հայաստանի» և Չարենցի «Երկիր Նաիրի» վեպերը քննելիս փորձել է ցույց տալ դրանց հարազատությունը, ներքին ընդհանրությունները, լիրիկական ծանրաբեռնվածությունը, պատմության փիլիսոփայությունը, քաղաքական գնահատականները և այլն: Սակայն այս մոտեցումները, որքանով էլ որ տրամաբանական են թվում, խուսափում են պատասխանել ավելի հիմնարար հարցին՝ ինչո՞ւ են հենց այս երկու վեպերն ունենում բացառիկ դիրք հայ գրականության մեջ:

Այս հոդվածով առաջարկում ենք տարածն մեթոդաբանական մոտեցում. երկու վեպերը քննել ոչ թե որպես «հարազատ» ստեղծագործություններ, այլ որպես ավանդույթի հաղթահարման երկու տարբեր փորձ, ասել է թե՛ յուրաքանչյուրն իր ժամանակի գրական ճգնաժամի յուրահատուկ պատասխան: Նման մոտեցումը թույլ է տալիս հասկանալ ոչ միայն այն, թե ինչո՞ւ են նման այս վեպերը, այլև ինչո՞ւ են դրանք եղել այդքան ազդեցիկ:

ՄԵԹՈԴԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ

Հետազոտությունն օգտագործում է համակցված մեթոդաբանական մոտեցում, որը ներառում է մի քանի տեսական շրջանակ: Հիմնական տեսական հենքը կազմում է Ֆրանկո Մորետտիի «փոխզիջման» տեսությունը, որը վերլուծում է արևմտյան գրական ֆորմաների և տեղական մշակութային նյութի փոխազդեցությունը: Այս մոտեցումը թույլ է տալիս հասկանալ, թե ինչպես են «փոքր» գրականությունները յուրացնում և վերափոխում համաշխարհային ժանրերը:

Երկրորդ տեսական բաղադրիչը Էդվարդ Սաիդի օրիենտալիզմի քննադատությունն է, որը բացահայտում է «արևելք-արևմուտք» հարաբերությունների բնույթը: Այս տեսանկյունից վեպի ժանրը դառնում է

մշակութային տիրապետության գործիք, որի միջոցով արևմտյան աշխարհընկալումը տարածվում է ոչ արևմտյան հասարակություններում:

Երրորդ մեթոդաբանական հենքը Միխայիլ Բախտինի ժանրային տեսությունն է, մասնավորապես վեպի՝ որպես «ընթացքի մեջ գտնվող ժանր»-ի մասին բացատրությունը: Սույն մոտեցումը ցույց է տալիս ժանրի ինքնաթարմացման հնարավորությունները և ավանդույթի հաղթահարման անհրաժեշտությունը:

Կիրառվում է նաև համեմատական գրականագիտության մեթոդը՝ ցույց տալու համար երկու տարբեր ժամանակաշրջանի գրական նորարարությունների ընդհանուր օրինաչափությունները:

ՔՆՆԱՐԿՈՒՄ

Մինչև օրս էլ գրականագիտության մեջ կան բանավեճեր՝ կապված վեպի ժանրի ծագման թե՛ տեղի, թե՛ ժամանակի հետ: Իր անունը՝ ռոման, վեպն ստացել է ռոմանական լեզուներից, քանի որ առաջին վիպական ստեղծագործությունները, որ միջնադարյան ասպետական վեպերն էին, գրվում էին այդ լեզուներով՝ ի հակադրություն դասական լատիներենի: Սակայն, որպես գրական-մշակութային բացառիկ նշանակություն ունեցող երևույթ, վեպը ոչ պակաս հաջողությամբ ուրույն դրսևորումներ ունեցավ նաև մյուս՝ ոչ ռոմանական լեզուներով գրող ազգերի մոտ: Նշելի է, որ վեպի պատմության և տեսության հարցերը զբաղեցրել են շատ գիտնականների, գրականության տեսաբանների, փիլիսոփաների (Հեգել, Շեյլինգ, Բեյլինսկի, Լուկաչ, Բախտին, Բարթ, Ի-Գասեթ, Մորետտի և ուրիշներ): Կարելի է ասել, որ վեպի ժանրին վերաբերող որևէ հարցի շուրջ միասնական կարծիք չկա, անգամ ժանրի ծագման տեղի, ժամանակի, ժանրի բնորոշման մասին: Այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ այն ժանրը, որին պատկանող ստեղծագործությունները մենք վեպ ենք անվանում, տեղային առումով՝ **արևմուտքի** (Եվրոպա), ժամանակային առումով՝ **արդի ժամանակների** (17-րդ դար) ծնունդ է:

Վեպը նոր ժամանակների համար ունի այն նույն դերը, ինչ էպոսը «բացարձակ ոգու» (Հեգելի ձևակերպմամբ) դարաշրջանում: Վեպի ծնունդով

ազդարարվում է էպոսի մահը, կամ հակառակը, էպոսի մահը հանգեցնում է վեպի ծնունդին:

Այնուամենայնիվ, մի բան անվիճելի է. վեպը վերջին հարյուրամյակների ամենամասսայական և ընթերցվող ժանրն է: Վեպը անսահման հնարավորությունների ժանր է, Բախտինի ձևակերպմամբ. *«վեպը ընթացքի մեջ գտնվող ժանր է» (Բախտին Մ., 1975)*, ընթացքի մեջ են գտնվում վեպի կերպարները, լեզուն, հեղինակը, ընթերցողը: Վեպը քանիցս ցույց է տվել իր կենսունակությունն ու հնարավորությունների ճկունությունը. ամեն անգամ, երբ այս ժանրի մասին մահախոսականներ են լսվում, այն հանկարծ կարողանում է գտնել թարմացման նոր ուղի:

Վեպի ժանրի պատմությունը, ըստ էության, հենց ավանդույթի հաղթահարումն է, այդ հաղթահարումը ավանդույթ դարձնելը, ապա վերստին այդ ավանդույթը հաղթահարելը: Ժանրի առաջին լիարժեք ներկայացուցիչ ընդունված է համարել Սերվանտեսի «Դոն Կիխոտը» (1605-1615): Սրանով Եվրոպայում փակվեց ծանոթ էպիկական աշխարհը և բացվեց մի բոլորովին նոր՝ վիպական աշխարհ:

Եվ այդուհանդերձ, մի բան գոնե փաստ է՝ վեպը **արևմտյան** ֆորմա է: Իհարկե, ներմուծվելով տարբեր վայրեր՝ վեպը հագեցնում է տվյալ երկրի մշակութային, մտածողության, ավանդույթների տարրերով: Ֆրանկո Մորետտին գրում է. *«Արդի վեպը միակ ժանրն էր, որ բարձրացավ ոչ թե ավերոնոմ տրարածման ճանապարհով, այլ որպես փոխզիջում՝ արևմտյան ֆորմալ ազդեցության (հիմնականում ֆրանսիական կամ անգլիական) և տեղական նյութի միջև» (Մորետտի Ֆ., 2012)*: Ասել է, թե՛ որտեղ էլ հայտնվում է վեպը, դառնում է տվյալ երկրի և արևմուտքի ակտիվ փոխներգործության ծնունդ՝ ֆորմալ առումով միշտ մնալով եվրոպական: Այս դեպքում «արևմուտքը» կարող է ամենևին էլ արևմուտքում չլինել, օրինակ, Լատինական Ամերիկայի համար, որ ժամանակի ընթացքում դարձավ խոշորագույն վիպագիրների հայրենիք, «արևմուտք» կոչվածը աշխահագրորեն արևելքում է: Վեպը Եվրոպայում ծագելուց հետո *«ալիքի նման»*

տարածվել է աշխարհի բոլոր կողմերում և այդ բոլոր կողմերը՝ վեպի ժանրի տեսանկյունից, նրա համար «օրինակ» են՝ արևելք:

«Օրինակալիզմ» եզրույթը, որ հայերեն բառով անվանում են նաև *արևելաբանություն*, հասկացություն է, որով բացատրվում են արևմուտք-արևելք փոխհարաբերությունները: Բանն այն է, որ, ուզենք թե չուզենք, աշխարհը մեզ ընկալելի է այնպիսին, ինչպիսի այն ընկալելի է արևմուտքին: Արևմուտքի խոսույթը աշխարհը պատմելու հարցում դոմինանտ է: Էդվարդ Սաիդը նշում է, որ «*Արևելաբանությունը Արևելքը տիրելու, այն վերակազմավորելու, և դրա նկատմամբ հեղինակություն հաստատելու արևմտյան ոճ է*» (Սայիդ է., 1978): Նույն հեղինակը շարունակում է. «*Արևելաբանը՝ լինի բանաստեղծ, թե գիտնական, Արևելքին խոսել է տալիս, նկարագրում է Արևելքը և պարզաբանում դրա առեղծվածները Արևմուտքի համար*», և ապա. «*Այն, որ Արևելաբանությունն ընդհանրապես իմաստ ունի, ավելի շուտ կախված է Արևմուտքից*» (Սայիդ է., 1978): Արդեն նշեցի, որ այս պարագայում «արևելք» ասելով նկատի ենք ունենում ոչ միայն բուն արևելքը, այլև աշխարհի այն ամբողջ հատվածը, որ դուրս է Կենտրոնական Եվրոպայից: Հասկանալու համար, թե որքան է արմատացած աշխարհին արևմուտքի աչքերով նայելու ձևը, բավական է թերթել, ասենք, համաշխարհային պատմության սովորական դասագիրքը՝ մտքում ունենալով այս քննադատական մոտեցումը:

Վեպի ժանրը ևս դառնում է արևելաբանության նյութ, քանի որ սա մշակութային առումով նույն երևույթի շարունակությունն է: Վահրամ Դանիելյանն իր հոդվածներից մեկում գրում է. «*Եթե նույնիսկ հակաարևմտյան կենսածն ու աշխարհընկալում ես քարոզում և ասենք՝ արևմտյան քաղաքական ու արդյունաբերական «հովերից» ուզում ես զերծ պահել քո երկիրը, միևնույնն է, չես կարող քո ժողովրդին արգելել վեպեր գրել և կարդալ: Կարող ես, ասենք՝ չթարգմանել արևմտյան հայտնի վեպերը, չխրախուսել կամ արգելել դրանց ընթերցումը, բայց չես կարող իր ժամանակը հասկանալ փորձող մարդուն՝ գրողին, արգելել մտածել վեպով*» (Դանիելյան Վ., 2016): Այսինքն՝ վեպը, լինելով արևմուտքի ստեղծած ժանր, իր ծննդյան առաջին իսկ օրվանից դառնում է

օրինակալիզմի նյութ: Այս առումով բացառություն չէ նաև հայ վեպը, ինչը հստակորեն երևում է հայ գրականության մեջ ստեղծված խոշորագույն վեպերի օրինակով՝ սկսած հենց առաջին վեպից՝ Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանից»:

Ու թեև թվում է՝ վեպի արևմտյան ֆորմա լինելու հարցը գոնե պիտի անվիճելի լիներ, բայց Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ժանրի մասին բանավեճերը սկսվեցին դեռևս 19-րդ դարում՝ տպագրվելուց անմիջապես հետո, և տասնամյակներ շարունակ դարձան քննարկման առարկա: Դեռևս վեպի լույսընծայման առաջին տարիներին բանավեճ առաջացավ Միքայել Նալբանդյանի և Ստեփանոս Ոսկանյանի միջև՝ արևմտյա՞ն (եվրոպական) թե՞ արևելյան էր այս վեպը (**Դանիելյան Վ., 2015**): Հարցը շարունակեց հուզել գրականագետներին նաև հետագայում: Արշակ Չոպանյանը, օրինակ, հակված էր մտածել, որ եթե արևմտահայության մեջ եվրոպական մշակույթը տարածվեց Մխիթարյան միաբանության միջոցով, ապա ռուսահայության (արևելահայության) մեջ եվրոպական մշակույթի տարածողի այդ դերն ունեցավ Աբովյանը, և ժողովրդի հետ մատչելի՝ «*ժողովրդին ծայնով*» խոսելը միջոց էր ազգի լուսավորության: Ընդունելով հանդերձ, որ Աբովյանի «Վերք...»-ը արևմուտքում ձևավորված անհատի մտահղացում է, ով սկիզբ է դնելու ազգի լուսավորությանն ու նոր գրականությանը, այնուամենայնիվ ժանրն անվանելիս Չոպանյանը տալիս է «*ժողովրդական դյուցազներգություն*» անվանումը. «...*հինգ տարվան եվրոպական կյանքե ու համալսարանական ուսումնասիրություններե հետո Աբովյանն իր վեպին մեջ կմնա գեղջուկ մը, որուն արձակը ուրիշ բան մը չէ, բայց եթե կուտակումն ու խտացումը հայ հողին բոլոր աշուղի երգերուն...*» (**Չոպանյան Ա., 1988**):

Պիոն Հակոբյանը, հիմնվելով Աբովյանի մի գրության վրա, որտեղ հեղինակն իր մտորումներն է հայտնել վեպի ձևի մասին («*Սակայն ի՞նչ ձևով պիտի ես այն վերարտադրեի: Որպես եվրոպական ճաշակի ու ոճի վե՞պ. դա հո վերին աստիճանի անմտություն կլիներ*»), եզրակացնում է, որ Աբովյանը չէր կարող

հետևած լինել եվրոպական վեպի մոդելին. *«Աբովյանն ասում է, որ ինքը գիտակցորեն չի դիմել եվրոպական վեպին» (Հակոբյան Պ., 1955):*

Գուցե ուսումնասիրողներին տարակուսանքի մեջ է գցել Աբովյանի ընտրած աշուղի կերպա՞րը կամ լեզո՞ւն, որով գրում է վեպը: Չէ՞ որ արևելյան լեզվով գրելուց բացի Աբովյանը նաև հարազատ է մնում արևելյան ոճին, նրա վեպը երբեմն ընդարձակ արևելյան բանաստեղծություն է հիշեցնում: Բայց Աբովյանի այս գրությունը այլ տեսանկյունից է մտորելու տեղիք տալիս: Ակնհայտ է, որ հեղինակը երկար ժամանակ իր ասելիքը տեղ հասցնելու առումով ձևի, ասել է թե՛ ժանրի որոնումների մեջ է եղել: Հայտնի է նաև, որ մինչև «Վերք Հայաստանի» վեպը Աբովյանը գրել էր չափածո մի պոեմ, որը պահպանվել է *«Աղասու խաղը»* անունով: Սա ևս մեկ անգամ փաստում է, որ Աբովյանն անվերջ որոնում էր այն ձևը, որը լավագույնս կարտահայտեր իր որոշած բովանդակությունն ու նյութը: *«Աղասուն ես անպայման ցանկանում էի մշակել իբրև ժողովրդական վեպ, որպեսզի դրանով օտարներին ծանոթացնեի ժամանակակից հայ ազգության հետ» (Հակոբյան Պ., 1955)*, մեկ այլ առիթով գրում է Աբովյանը (ընդգծումն իմն է-Թ. Ղ.), և հեղինակի այս բնորոշումը՝ ժողովրդական վեպ, հետագայում հաճախ կիրառում են նաև ուսումնասիրողները:

Աբովյանը, այնուամենայնիվ, իր վեպում հետևողականորեն կիրառում է «եվրոպական» վեպին բնորոշ ֆորմաներ (ճամփորդությունը, նամակագրությունը, սիրային պատմությունը և այլն), ինչը շատ հաճախ դառնում է հակասությունների և խճողվածության պատճառ (Դանիելյան Վ., 2015): Սակայն պարզվում է, որ Աբովյանի այս գրության մեջ «ժողովրդական վեպ» բնութագրումից բացի կա ևս մեկ հետաքրքիր պահ. այն, որ հեղինակը վեպը գրում էր ոչ թե կամ ոչ միայն տեղացիներին արևմտյան ֆորմայի հետ, այլև *«օտարներին»* տեղացիների կյանքին ծանոթացնելու նպատակով: Այս պարագայում *«օտարները»* արևմուտքն էր, կամ ինչպես ինքը՝ հեղինակը կասեր, *«լուսավորված ազգերը»*, իսկ արևմուտքի հետ տրամաբանորեն կլինեի խոսելը հենց արևմտյան ժանրով: Ուրեմն՝ եթե Աբովյանն ինքն իր առաջ խնդիր է դնում *«եվրոպական ճաշակի ու ոճի»* վեպ չգրելու, սա

ամենևին էլ ժանրին չէր վերաբերում, և այստեղ է, որ հեղինակը պիտի գնար **փոխզիջումների՝** արևելքի և արևմուտքի միջև:

Եթե թերթենք Աբովյանի նամակները, օրագրային գրառումներն ու նշումները, կտեսնենք, որ այն լեզուն, որով գրում է Աբովյանը, ամենևին էլ իր ամենօրյա կիրառելի լեզուն չէ: Փորձենք կարդալ Աբովյանի տեքստերը՝ ուշադրության առանցքում ունենալով լեզուն: Մինչդրոպատյան շրջանում և Դորպատյան շրջանի սկզբում Աբովյանի լեզուն գրաբարն է. օրինակ, 1848 թվականի Աբովյանի *«Ճամփորդական նոթերում»* կարդում ենք. *«Վերջապէս Լոռի նովաւ է արժանայիշատակ՝ զի 1825 թուին բոլոր բնակիչք Փամբակի թափուեցալ աստ, թողեալ զբոլոր կայս իրեանց երկն և բնակեցան անց: Չի՞ք այլ քարափ, այր, ձոր, ուր ո՛չ լինէին ողորմելի ընտանիք»* (**Հակոբյան Պ., 1955**): Դորպատում և հետդրոպատյան շրջանում Աբովյանը գրաբարից անցնում է այնպիսի հարթ ու մշակված աշխարհաբարի, որ նույնիսկ այսօրվա ընթերցողին այն թվում է իր ժամանակակից. *«Ո՛չ երեսներին ամոթ կա, ո՛չ էլ սրտներում պատրվի զգացում: Շների նման չափչփում են դռներդուռ, հենց որ մի տեղ հոտ առան, իսկույն կվազեն, դուռը որ փակես, լուսամուտից ներս կթռչեն...»* (**Հակոբյան Պ., 1955**): Սակայն վեպը գրելիս նա դիմում է բավականին անմշակ, անհարթ, ոչ կոկ, կենցաղային լեզվին՝ **Քանաքեռի բարբառին**: Բարբառով գրելը, ինչպես հոդվածի սկզբում ցույց եմ տվել, արդեն վեպի ժանրին բնորոշ մեկ այլ հատկանիշ է: Սա հեղինակն անում է, ըստ երևույթին, ընթերցողի հետ նույն հարթության վրա գտնվելու մղումով՝ ցույց չտալու իր առավելությունը նրա նկատմամբ: Սակայն իրականում թե՛ լեզվի այսպիսի կիրառումը, թե՛ ընթերցողին *«իմ ազիզ ազգ»*, *«իմ աչքի լույս հայ»*, *«մեր տղա՛»* կամ *«էրեխե՛ք»* ասելը ամենևին չեն ծածկում այն հանգամանքը, որ գրողը թե՛ ընթերցողի, թե՛ տեքստի նկատմամբ բավականին բարձր դիրքերից է խոսում՝ ավելի շուտ սովորեցնողի, քան պատմողի: Թերևս սա նկատի ունենալով է Չոպանյանն ընդգծում. *«այդ գեղջուկը (Աբովյանը-Թ. Ղ.) գրագետ և մեծ գրագետ է»* (**Չոպանյան Ա., 1988**): Սա մի երևույթ է, որ դարձյալ կապվում է վեպի ժանրին: Աբովյանը Աբովյան չէր դառնա, եթե չգնար Դորպատ (արևմուտք) և այնտեղի

կրթությամբ ու այնտեղից չգրեր իր հարազատ Քանաքեռի մասին իր հարազատ Քանաքեռի բարբառով: Այսինքն՝ դարձյալ բախվում ենք այն խնդրին, որ արևելքն «իրավունք» է ունենում ինքն իր մասին խոսելու, երբ արևմտականանում է՝ ունի արևմտյան կրթություն, խոսում է արևմտյան ժանրով, իբրև **հեղինակություն** ունի արևմուտքը:

Որքան էլ Աբովյանի քաղաքական կողմնորոշումը, գոնե վեպում, ռուսական էր, մշակութային առումով նա նախապատվությունը տալիս է Եվրոպային՝ Գերմանիային, Ֆրանսիային, Անգլիային. *«Ֆրանցուզ, նեմեց, ինգլիզ որ քո լեզուն սիրում, գովում են, քանի՞ պատրիկ դու էլ պետք է սիրես ու գովես»* (Աբովյան **Խ.**, 1984):

Նույն երևույթը նկատում ենք Չարենցի դեպքում պարզապես, եթե Աբովյանի համար արևմուտքը մերձբալթյան Եվրոպան էր՝ Դորպատը, ապա Չարենցի համար Ռուսաստանն էր՝ Մոսկվան: Թե՛ Խաչատուր Աբովյանի, թե՛ Եղիշե Չարենցի դերը հայ գրականության մեջ կարևորվում է այնքանով, որքանով նրանք կարողացան հայկական մշակույթը (այս դեպքում՝ գրականությունը) համաշխարհային ընթացքի ուղղությամբ տանել՝ **հաղթահարելով իրենցից առաջ կուտակված և համարյա արդեն կարծրացած ավանդույթը:**

Դժվար է ասել՝ հեղափոխությունը բերեց Չարենցին, թե՛ Չարենցն ինքը բերեց հեղափոխությունը: Ստույգ է միայն այն, որ Չարենցին ընդունված է անվանել *«հեղափոխության երգիչ»* և այս բնութագրումը լիովին տեղին է նաև գրականագիտական տեսանկյունից: Այն, ինչ արեց Չարենցը գրականության մեջ, այլ բառով չես անվանի, քան հեղափոխություն: Խոսքն այն մասին չէ, ինչ ընդունված է հասկանալ Չարենցին *«հեղափոխության երգիչ»* անվանելիս՝ նկատի ունենալով նրա՝ հեղափոխության թեմայով գրված ստեղծագործությունները, այլ այն, թե ինչ արեց Չարենցը գրականության մեջ՝ միշտ մնալով հեղափոխական, միշտ վերընթերցելով արդեն գոյություն ունեցող ձևերը, երբեք չմնալով ինչ-որ ձևի կամ գրական ինչ-որ տարածության մեջ: Խոսքը նաև և հատկապես այն ժամանակաշրջանի մասին էր, որը հետաքրքրում է մեզ այս հոդվածի շրջանակում,

երբ գրվում էր «Երկիր Նաիրին»: Չարենցի՝ 1921-23 թթ. ստեղծագործական պատմությունը հատկապես **ավանդույթի հաղթահարման պատմություն** է: Այն, ինչ որ է «Ռոմանս անսերը» քնարերգության, առավել ևս՝ սիրային քնարական պոեմի համեմատությամբ, նույնն է «Երկիր Նաիրին» դասական վեպի կողքին: Եվ քանի որ այս վեպը մեր իմացած վիպական «բանաձևով» չի «լուծվում», այն մինչ օրս տարակույսներ է առաջացնում՝ ողբերգակա՞ն վեպ է, թե՞ երգիծական, քնարակա՞ն, թե՞ էպիկական:

1920-ականներն մի շրջան էր, երբ վեպը կտրուկ նահանջ էր ապրում. իր ծննդյան օրից ի վեր ժանրը այնքան մահագրեր չէր լսել, ինչքան այս շրջանում: Խոսե Օրտեգա-ի-Գասեթը «Մտքեր վեպի մասին» էսսեում գրում է. «Ժանրը արվեստում նույնն է, ինչ տեսակը կենսաբանության մեջ. դա հնարավորությունների **սահմանափակ խաղացանկ է**», ու թեև վեպ կոչվող ժանրի «հանքերը վիթխարի են», այնուամենայնիվ դրանք էլ «վերջ ունեն»։ «Վեպն իր տրամադրության տակ հնարավոր թեմաների լիովին **որոշակի քանակ ունի**» (Խոսե Օրտեգա-ի-Գասեթ, 1999):

Հայ գրականության մեջ ևս, ինչպես ամբողջ աշխարհում, 20-ականներն վեպի ճգնաժամի փուլ էր: Բավական է փաստել, որ **ամբողջ 20-ականներին գրվեց միայն մեկ վեպ**՝ Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրին». ժանրի մահախոսականների ներքո՝ իր պատմողի կերպարի պես, Չարենցը գնում է թաղելու Երկիրը Նաիրին, բայց ապրեցնելու ժանրը: Սա Չարենցի միակ վեպն է, դրանից հետո և առաջ Չարենցի ստեղծագործական հիմնական ձևը մնաց պոեզիան: Հետևաբար, Չարենցի կատարածը՝ վեպ գրելը ժանրի թաղման շրջանում, կրկին կարող ենք դիտարկել հոսանքին հակառակ գնալու իր ստեղծագործական բնույթի տրամաբանության մեջ:

Չարենցի այս վեպի շուրջ հավաքվեց հետագայի հայ արձակը գրեթե ամբողջապես, սկսվեց ծննդավայրերի (արդեն գոյություն չունեցող կամ քայքայվող) մասին ստեղծվող վեպերի շարք՝ տարբեր հեղինակների կողմից (Բակունց, Մահարի, Թորոմենց, Մկրտիչ Արմեն): **Ավերակներից վերստեղծվող հայրենիքի**

մասին Չարենցի վեպին հաջորդեց այն, որ այդ սկզբունքով կառուցվեց հետագայի ողջ հայ նորագույն գրականությունը՝ ընդհուպ մինչև Մաթևոսյան:

Չգիտեմ՝ երբևէ Աբովյանին անվանե՞լ են արդյոք *«հեղափոխության երգիչ»*, բայց ըստ էության, Աբովյանի արածը իր ժամանակի մեջ ավելի մեծ խիզախում էր, քան Չարենցին՝ իր ժամանակի մեջ, և մշակութային առումով երկուսին էլ այլ կերպ չի կարելի անվանել, քան հեղափոխականներ: Ընդ որում, ժանրի ծնունդի, պատմության և զարգացման համար Աբովյանի *«Վերք Հայաստանին»* ունեցավ նույն դերը, ինչ հետագայում պիտի ունենար Չարենցի վեպը, այսինքն՝ իր շուրջ հավաքեց հայ նոր գրականությունը (**Չարենց Ե., Վշտունի Ա., Աբով Գ., 1922**): Ի վերջո, ամենևին պայմանականություն չէ, որ այս հեղինակներից մեկի գրականությամբ սկսում ենք նոր, մյուսինով՝ նորագույն գրականության ուսումնասիրությունը, քանի որ սրանք երկուսն էլ գրականության ինչ-որ ցիկլի սկիզբ են, որ իրենց շուրջն են հավաքում կամ իրենցից բխեցնում են իրենցից հետո եկող հեղինակներին:

Վեպի՝ որպես ժանրի, ամենակարևոր առանձնահատկությունը մշտապես նոր լինելն է, ահա թե ինչու հատկապես այս ժանրով ստեղծագործելիս անհրաժեշտ է միշտ լինել հեղափոխական՝ դասական լինելու համար: Այն, ինչ Աբովյանը գրում է իր վեպի առաջաբանում գրական հեղափոխականի մանիֆեստ է, նա ուղղակի հայտարարում է, որ պետք է ազատվել ավանդույթից: Միգուցե համեմատությունս կոպիտ հնչի, բայց կարելի է ասել, որ **Աբովյանի վեպի առաջաբանը համանման է Չարենցի և ընկերների «Երեքի» դեկլարացիային (Չարենց Ե., Վշտունի Ա., Աբով Գ., 1922)**: Աբովյանն այլևս չի ուզում գրել գրաբար, չի ուզում գրել դյուցազունների ու թագավորների, առավել ևս՝ սրբերի մասին, և չի ուզում գրել այն բովանդակությամբ, որի բացակայող տարրերն էին սերը, հայրենասիրությունը, ընտանիքը և այլն: Թերևս կարելի է այսպես ձևակերպել՝ Աբովյանը ցանկանում էր *«արդիականության շոգենավից դուրս նետել»* (Չարենցի բառերով) հին լեզուն, հին հերոսներին ու հին բովանդակությունը: Սա նույնն էր ինչ

ցանկանում էր Չարենցը և մասնավորապես այն տարիներին, երբ գրվում էր «Երկիր Նաիրին» («Երեքի» դեկլարացիան, *Standart*-ի կուրսը և այլն):

Եթե Աբովյանի վեպի դեպքում «թիրախները» գրաբարով ու «սրբերի վրա» գրված իրեն նախորդած շրջանի տեքստերն էին, որի փոխարեն նա ընտրում է գրել Քանաքեռի բարբառով, պատմել աշուղի պես ու բովանդակությունը լցնել սրտի բաներով՝ սիրով, բարեկամությամբ, հայրենասիրությամբ, ապա 80 տարի անց Աբովյանի բերած այս հեղափոխական նորություններն են դառնում Չարենցի «թիրախները», որով նա մերժում է «հայրենիքի», «անբիծ սիրո» բովանդակությամբ լցված պոեզիան: Փոխվում է միայն առողջ լեզվի ու կենդանի բովանդակության սահմանումը: Չարենցը համարում է, որ նորից պետք է մոտեցնել «կենդանի խոսքին», բայց այս անգամ՝ «մասսաների» մակարդակում: Սրանք երկուսն էլ գիտակցված որոշումներ են ու ծրագրված արարքներ, թե ինչպես թարմացնել գեղարվեստական գրականության ուղին:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ավանդույթի հաղթահարման համատեքստում երկու վեպերը դիտարկելիս կարելի է նկատել հետևյալ օրինաչափությունները: Երկու հեղինակներն էլ քննադատական հայացք ունեն կուտակված ավանդույթի նկատմամբ, նրանք հասկանում են, որ նախորդ շրջանի ասելիքով ծանրաբեռնված գրականությունը հասել է իր սահմանագծին և նորարարության կարիք ունի:

Աբովյանի համար այդ նորարարությունը «սրբերից» դեպի «սրտի բաների» անցումն է, Չարենցի պարագայում՝ «սրտի բաներից» դեպի «մարմնի բաների»: Աբովյանի պարագայում գրաբարից աշխարհաբար անցումն է, Չարենցի պարագայում՝ սիմվոլիզմից դեպի «հեղափոխական ռիթմի»: Եթե Աբովյանը փորձում է վերստեղծել Հայաստան աշխարհը իր ֆիզիկական արտահայտությամբ և հնարավորինս հավաստիություն հաղորդել նյութին, Չարենցն առավելագույնս գեղարվեստականացնում, միֆականացնում է ֆիզիկական աշխարհը՝ կասկածներ սերմանելով ընթերցողի մեջ:

Այս ուսումնասիրությունը բացահայտում է ավանդույթի հաղթահարման ցիկլային բնույթը հայ գրականության մեջ և ցույց է տալիս, որ մեծ գրական նվաճումները ծագում են ոչ թե ավանդույթի շարունակությունից, այլ դրա գիտակցված քննադատությունից և վերափոխումից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. **Աբովյան Խ. (1984)**, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
2. **Բախտին Մ. (1975)**, Эпос и роман (О методологии исследования романа), http://www.gumer.info/bibliotek_Buks/Literat/bahtin/epos_roman.php (մուտք՝ 08.08.2025)
3. **Դանիելյան Վ. (2015)**, Ինչու և ինչպես վերընթերցել Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպը, <http://inknagir.org/?p=4770> (մուտք՝ 08.08.2025)
4. **Դանիելյան Վ. (2016)**, Պատմություն, Քաղաքականություն, Աշխարհագրություն՝ Վեպ, <http://www.prm.am/?p=2595> (մուտք՝ 08.08.2025)
5. **Հակոբյան Պ. (1955)**, Խաչատուր Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի ստեղծագործական պատմությունը, Երևան, Հայաստանի ՍՍՌ ԳԱ հրատ.:
6. **Ղազարյան Թ. (2024)**, Եղիշե Չարենցի «Երկիր Նաիրի» վեպի խմբագրումների պատմությունը, Խ. Աբովյանի անվան ՀՊՄՀ «Հայագիտական հանդես» ամսագիր, №1(64), Երևան, էջ 170-183:
7. **Մորետտի Ֆ. (2012)**, Վարկածներ համաշխարհային գրականության մասին, <https://vemjournal.org/wp-content/uploads/2020/07/19-Հավելված-2012-4.pdf> (մուտք՝ 08.08.2025)
8. **Սայիդ Է. (1978)**, Օրիենտալիզմ, Vintage Books, Նյու Յորք https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&opi=89978449&url=https://monoskop.org/images/4/4e/Said_Edward_Orientalism_1979.pdf&ved=2ahUKEwj_bte_OqjCPAxBuQPEDHVUUbL84QFnoECBkQAQ&usg=AOvVaw1-VwUeqrpK6QJupadG8Wro (մուտք՝ 08.08.2025)
9. **Չարենց Ե., Վշտունի Ա., Աբով Գ. (1922)**, Դեկլարացիա Երեքի, Երևան, «Խորհրդային Հայաստան», հունիսի 14, № 130:

10. **Ջուպանյան Ա. (1988)**, Երկեր, Երևան, «Սովետական գրող» հրատ.:
11. **Խոսե Օրտեգա-ի-Գասեթ (1999)**, Մշակույթի փիլիսոփայություն, Երևան, «Ապոլոն» հրատ.:

REFERENCES

1. **Abovyan Kh. (1984)**, Erker /Works/, Yerevan, "Sovetakan grogh" Publishing House.
2. **Bakhtin M. (1975)**, Epic and Novel (On the Methodology of Studying the Novel), http://www.gumer.info/bibliotek_Buks/Literat/bahtin/epos_roman.php (accessed: August 08, 2025)
3. **Danielyan V. (2015)**, Inchow & inchpes very'nt'ercel Xachatowr Abovyani «Verq Hayastani» vep'y' /Why and How to Re-read Khachatur Abovyan's "Wounds of Armenia"/, <http://inknagir.org/?p=4770> (accessed: August 08, 2025)
4. **Danielyan V. (2016)**, Patmowt'yown, Qaghaqakanowt'yown, Ashxarhagrowt'yown' Vep /History, Politics, Geography' Novel/, <http://www.prm.am/?p=2595> (accessed: August 08, 2025)
5. **Hakobyan P. (1955)**, Xachatowr Abovyani «Verq Hayastani» vepi steghc'agorc'akan patmowt'yowny' /The Creative History of Khachatur Abovyan's Novel "Wounds of Armenia"/, Yerevan, Publishing House of the Academy of Sciences of the Armenian SSR.
6. **Ghazaryan T. (2024)**, Eghishe Charenci «Erkir Nairi» vepi xmbagrowmneri patmowt'yowny' /The History of Editorial Versions of Yeghishe Charents' Novel "Land of Nairi"/, Khachatur Abovyan Armenian State Pedagogical University "Journal For Armenian Studies", № 1(64), Yerevan, pp. 170-183.
7. **Moretti F. (2012)**, Varkac'ner hamashxarhayin grakanowt'yan masin /Conjectures on World Literature/, <https://vemjournal.org/wp-content/uploads/2020/07/19-Հավելված-2012-4.pdf> (accessed: August 08, 2025)

8. **Said E. (1978)**, O'rientalizm /Orientalism/, Vintage Books, New York,
https://www.google.com/url?sa=t&source=web&rct=j&opi=89978449&url=https://monoskop.org/images/4/4e/Said_Edward_Orientalism_1979.pdf&ved=2ahUKEwj bte_OqjCPAxUbQPEDHVUbl84QFnoECBkQAQ&usg=AOvVaw1-VwUeqrpK6QJupadG8Wro (accessed: August 08, 2025)
9. **Charents Y., Vshtuni A., Abov G. (1922)**, Deklaracia Ereqi /Declaration of the Three/, Yerevan, "Soviet Armenia", June 14, No. 130.
10. **Chopanyan A. (1988)**, Erker /Works/, Yerevan, "Sovetakan grogh" Publishing House.
11. **José Ortega y Gasset (1999)**, Mshakowyt'i p'ilisoo'ayowt'yown /Philosophy of Culture/, Yerevan, "Apollon" Publishing House.

Taghuhi Ghazaryan

Two novels, two attempts at overcoming tradition (Khachatur Abovyan's "Wounds of Armenia" and Yeghishe Charents' "The Land of Nairi")

Conclusion

Key words and expressions: novel, tradition overcoming, orientalism, Abovyan, Charents, genre innovation, Western form, compromise, literary revolution, methodological identity.

This article examines the mechanisms of tradition overcoming in Khachatur Abovyan's "Wounds of Armenia" and Yeghishe Charents' "Land of Nairi" novels. The study demonstrates that these works represent two different models of literary innovation, each providing a unique response to the literary crisis of its time. The research applies Franco Moretti's compromise theory, Edward Said's orientalism critique, and Bakhtin's genre approaches. Abovyan's model is characterized as a "substitutional" strategy, where old elements (classical Armenian, sacred content) are completely replaced by new ones (dialect, romantic-national material). Charents' model is presented as a "critical" method, where traditional forms are preserved while being

subjected to irony and reinterpretation. The article reveals the cyclical nature of tradition overcoming, showing that Abovyan's revolutionary achievements become the object of Charents' criticism. It concludes that the similarity between the two novels lies not in content but in methodological identity – both consciously destroy the literary conventions of their time. The study reveals that the novel as a Western form requires constant renewal and overcoming of established traditions to maintain its viability. The research contributes to understanding the dynamics of literary development in "minor" literatures and demonstrates how global genres adapt to local cultural contexts through conscious rejection of previous achievements.

Тагуи Газарян

**Два романа, два опыта преодоления традиции (романы Хачатура Абовяна
«Раны Армении» и Егише Чаренца «Страна Наири»)**

Заключение

Ключевые слова и выражения: роман, преодоление традиции, ориентализм, Абовян, Чаренц, жанровая инновация, западная форма, компромисс, литературная революция, методологическая идентичность.

Статья посвящена анализу механизмов преодоления традиции в романах Хачатура Абовяна «Раны Армении» и Егише Чаренца «Земля Наири». Исследование показывает, что эти произведения представляют два различных модели литературной инновации, каждая из которых является уникальным ответом на литературный кризис своего времени. В работе применяются теория компромисса Франко Моретти, критика ориентализма Эдварда Саида и жанровые подходы Бахтина. Модель Абовяна характеризуется как «замещающая» стратегия, где старые элементы (грабар, религиозное содержание) полностью заменяются новыми (диалект, любовно-национальный материал). Модель Чаренца представлена как «критический» метод, где традиционные формы, сохраняясь, подвергаются иронии и переосмыслению. Статья раскрывает циклическую

природу преодоления традиции, показывая, что революционные завоевания Абовяна становятся объектом критики Чаренца. Делается вывод, что сходство двух романов заключается не в содержательной, а в методологической идентичности – оба сознательно разрушают литературные условности своего времени. Исследование выявляет, что роман как западная форма требует постоянного обновления и преодоления установившихся традиций для сохранения своей жизнеспособности. Работа вносит вклад в понимание динамики литературного развития в «малых» литературах и демонстрирует специфику адаптации мировых жанров к локальным культурным контекстам.

Taguhi Ghazaryan

Two novels, two attempts at overcoming tradition (Khachatur Abovyan's "Wounds of Armenia" and Yeghishe Charents' "The Land of Nairi")

Conclusion

Key words and expressions: *novel, tradition overcoming, orientalism, Abovyan, Charents, genre innovation, Western form, compromise, literary revolution, methodological identity.*

This article examines the mechanisms of tradition overcoming in Khachatur Abovyan's "Wounds of Armenia" and Yeghishe Charents' "Land of Nairi" novels. The study demonstrates that these works represent two different models of literary innovation, each providing a unique response to the literary crisis of its time. The research applies Franco Moretti's compromise theory, Edward Said's orientalism critique, and Bakhtin's genre approaches. Abovyan's model is characterized as a "substitutional" strategy, where old elements (classical Armenian, sacred content) are completely replaced by new ones (dialect, romantic-national material). Charents' model is presented as a "critical" method, where traditional forms are preserved while being subjected to irony and reinterpretation. The article reveals the cyclical nature of

tradition overcoming, showing that Abovyan's revolutionary achievements become the object of Charents' criticism. It concludes that the similarity between the two novels lies not in content but in methodological identity – both consciously destroy the literary conventions of their time. The study reveals that the novel as a Western form requires constant renewal and overcoming of established traditions to maintain its viability. The research contributes to understanding the dynamics of literary development in "minor" literatures and demonstrates how global genres adapt to local cultural contexts through conscious rejection of previous achievements.

Թազուհի Ղազարյան – Երևանի պետական համալսարանի Հայ նորագույն գրականության պատմության և գրաքննադատության ամբիոնի ասպիրանտ: Գիտական հետաքրքրությունները՝ վեպի ժանր, արդի գրականություն, Եղիշե Չարենց: Հեղինակ է 18 հոդվածների: 098440152 ghazaryantaguhi@gmail.com

Taguhi Ghazaryan - PhD student of the Chair of History of Modern Armenian Literature and Literary Criticism at Yerevan State University. Scientific interests: novel genre, contemporary literature, Yeghishe Charents. Author of 18 articles. 098440152 ghazaryantaguhi@gmail.com

Тагуи Газарян - Аспирант кафедры истории новейшей армянской литературы и литературной критики Ереванского государственного университета. Сфера научных интересов: жанр романа, современная литература, Егише Чаренц. Автор 18 статей. ghazaryantaguhi@gmail.com

Խմբագրություն է ուղարկվել 12.08.2025թ.

Հանձնարարվել է գրախոսության 27.08.2025թ.

Հրապարակման է ներկայացվել 10.09.2025թ.